## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*«15» Սեպտեմբերի 2020թ.* Թիվ 24

### ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

*Կողմ- 7* *Դեմ-0* *Ձեռնպահ-0*

*Ռ.Մովսիսյան* ________/ստ./
*Թ.Սողոմոնյան* ________/ ստ./
*Լ.Հակոբյան* ________/ ստ./
*Վ. Վարդանյան* ________/ստ/
*Հ.Գալստյան* ________/ստ/
*Ն.Կյուրեղյան* ________/ստ/
*Ս. Սարգսյան* ________/ստ/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.ԱՓՈՅԱՆ

Կ. Տ.

*2020 թվականի*
*Սեպտեմբերի«15»*
*Մրգաշատի համայնքապետարան*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ15- ի ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 24 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ
համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 15 -ի թիվ 5 արտահերթ նիստի

1. Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 15 ի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «2020 թվականի համայնքի բյուջեի հաստատման մասին» N39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի աճուրդ վաճառքի մասին:
4. Հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփխության մասին

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 25-Ն

«15» Սեպտեմբերի 2020թ.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի « 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԹԻՎ 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով իրավական ակտերի փորձաքննության գործակալության եզրակացությունը.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «2020 թվականի Համայնքի բյուջեն հաստատելու մասին» N 39-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Ծախսային մաս

ա/ / 09 բաժնի 05 խմբի 1 դասի 5134 հոդվածի «580.0» թիվը փոխարինել «**244.2**»հազ դրամ թվով գումարը նպատակաուղղել մանկապարտեզի վերանորոգմանը:

բ/ 11 բաժնի 01 խմբի 2 դասի 4891 հոդվածի «7581.0»հազ դրամ թիվը փոխարինել «**2786.0**»հազ դրամ թվով գումարը հատկացվելու է ֆոնդային բյուջեին և նպատակաուղղվելու է մանկապարտեզի և ճանապարհային վերանորոգմանը:

գ/ / 09 բաժնի 01 խմբի 1 դասի 5113 հոդվածի «.13900.0» թիվը փոխարինել «**15826.2**»հազ դրամ թվով.

Գումարը ավելացվել է որպեսզի ապահովի սուբվեցիոն ծրագրի մեր մասի վճարումը:

դ/ 04 բաժնի 05 խմբի 1 դասի **5113** հոդվածի «**9670.0** »հազ դրամ թիվը փոխարինել «**13265.0**» հազ դրամ թվով,

Գումարը ավելացվել է որպեսզի ապահովի սուբվեցիոն ծրագրի մեր մասի վճարումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ- 7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ռ.Մովսիսյան /ստ./
Թ.Սողոմոնյան /ստ./
Լ.Հակոբյան /ստ./
Վ. Վարդանյան /ստ/
Հ.Գալստյան /ստ/
Ն.Կյուրեղյան /ստ/
Ս. Սարգսյան /ստ/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.ԱՓՈՅԱՆ

Կ. Տ.

2020 թվականի
Սեպտեմբերի«15»
Մրգաշատի համայնքապետարան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*«15» Սեպտեմբերի 2020թ.* Թիվ 26

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Մրգաշատ համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 22-ի <<Մրգաշատ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի աճուրդ վաճառքի մասին>> թիվ 27 որոշումը.

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող՝04-067-479-077 ծածկագրի տակ գտնվող 1680ք/մ գյուղ նշանակության հողատարածքի աճուրդ վաճառքի վերաբերյալ:
2. Գյուղատնտեսական նշանակության այլ հողերիից 04-067-479-077ծածկագրի տակ գտնվող 1680ք/մ հողատարածի մեկնարկային գինը սահմանել 84000 (ութսունչորս հազար ) ՀՀ դրամ:
3. Մեկ քայլի արժեքը՝ մեկնարկային գնի 5%:
4. Աճուրդ վաճառքի մասնակցության վճարը սահմանել 5000 (հինգ հազար ) ՀՀ դրամ:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ*

*Կողմ- 7* *Դեմ-0* *Ձեռնպահ-0*

*Ռ.Մովսիսյան* ------------- */ ստ./*
*Թ.Սողոմոնյան* ------------- */ ստ./*
*Լ.Հակոբյան* ------------- */ ստ./*
*Վ. Վարդանյան* ____________ */ստ/*
*Հ.Գալստյան* ____________ */ստ/*
*Ն.Կյուրեղյան* ____________ */ստ/*
*Ս. Սարգսյան* ____________ */ստ/*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ* *Ա.ԱՓՈՅԱՆ*

*Կ. Տ.*

*2020 թվականի*
*Սեպտեմբերի«15»*
*Մրգաշատի համայնքապետարան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

**«15 » Սեպտեմբերի 2020 թ.** **Թիվ 27-Ա**

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.11.2011թ թիվ 1518-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 2-րդ և 29-րդ հոդվածներով,Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով և հիմք ընդունելով 21.11.2016թ միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 88 դրական եզրակացությունը

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է:*

*1.*Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի վարչական տարածքի հողեր օգտագործման ժամանակավոր սխեմայում քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,9567հա հողերից /հողամասի սեփականության իրավունքի գրանցման N2654769 վկայական,կադաստրային ծածկագիր 04-067-705-007/0,2հա այլ հողեր փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության/առևտրի սրահ և ավտոտեխսպասարկման կետ/:
*2.*Հանձնարարել համայնքի ղեկավարին ապահովել գանձելու հողերի նպատակային նշանակության փոփոխության հետ կապված հողերի կադաստրային արժեքների տարբերությունը:
*3.*Համայնքի ղեկավարին իրականացնել սույն որոշումից բխող բոլոր գործառույթները:
*4.*.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ*

*Կողմ-7* *Դեմ- 0* *Ձեռնպահ-0*

*Ռ.Մովսիսյան* ------------------/ ստ./
*Թ.Սողոմոնյան* ------------------/ ստ./
*Լ.Հակոբյան* ------------------/ստ./
*Վ. Վարդանյան* ________________/ստ/
*Հ.Գալստյան* ________________/ստ/
*Ն.Կյուրեղյան* ________________/ստ/
*Ս. Սարգսյան* ________________/ստ/

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ* *Ա.ԱՓՈՅԱՆ*

*2020թվականի*
*Սեպտեմբերի «15»*
*Մրգաշատի համայնքապետարան*

*Կ. Տ.*